ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԼԵԶԻ «ԱՐԵԳԱԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
բն. Արալեզ, Թումանյան 10, 093315808, aralez.aregak.nuh@mail.ru

N 34
27.05.2026թ.

«Տաթևիկ Գորգինյան»Ա/Ձ -ին
(ՀՎՀՀ 43993369, էլ հասցե tatevikgorginyan5@gmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

2026 թվականի հունվարի 07-ի «ԱԱՄ-ԳՀԱՊՁԲ-26/01» ծածկագրով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Վեդի համայնքի Արալեզի «Արեգակ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ (այսուհետ՝ Պատվիրատու) և «Տաթևիկ Գրոգինյան» Ա/Ձ-ի N միջև 2026 թվականի հունվարի 07-ին կնքվել է սննդամթերքի մատակարման N ԱԱՄ-ԳՀԱՊՁԲ-26/01 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն որի՝ վաճառողը ստանձնել է գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-

ժամանակացույցով նախատեսված ապրանքը իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար :

Պայմանագրի 2. 1 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի

Պայմանագրի 2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Տաթևիկ Գորգինյան» Ա/Ձ –ի կողմից «25» մայիսի 2026 թվականի գրությունը, Պատվիրատուն միակողմանի և մասնակի լուծում է Պայմանագիրի Հավելված N 1 չափաբաժին 18-ը (պանիր Չանախ):

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած

անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, փոխանցել ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ Վեդի մասնաճյուղ՝ 220129690396000 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները սույն ծանուցումը ստանալու պահից հաշված 10 /տասը/ օրվա ընթացքում փոխանցվի նշված հաշվեհամարին, ապա Կապալառուի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Տնօրեն՝ Տ.Շահինյան